

Stempelverwaltung

խօսակցութեան մէջ երբեմն դորձած ելու սովորութիւնն ունինք :

Մարդ խիստ ապականեալ սիրտ ունենալու է որ այն խօսքերնու հետեւընէ թէ՛

«Եմանութեամբ՝ Սոքրանն է՝ փառնոսեանը, Հայոց ազգն է՝ Եբրայեցիները, Սղապն ուն վարժարանն է՝ տաճարը, և ուրեմն Հայոց ազգէն պակասած առաքինութիւնն է՝ փանոսեանի հազար աղիկ առնելու թոյլ չտալն» : Կեցցէ՛, շատ աղւոր մեկնութիւն : Երանի՛ ախ թնթերցողաց, որ այսպիսի մեկնութիւններ յաճախ կարգաւ բաղդաւորութիւնն ունին :

Մեր բաժնն այն է թէ՛ Եբրայեցիք հանդուրժեցին Սոքրանն իմաստնոյ հազար կին տունելուն, և մեր մէջ խել մը մարդիկ մէկ աղկան վրայ փանոսեան էֆէնտիկի դէմ կ'աւաճ սոսկ անորոշ տաճարաւորութեան մը համար և մինչև իսկ բողոքող մը կամ դատաւար մը չունեցած՝ և ըստ իմ դատողութեան լոկ զրպարտութեան մը վրայ այնքան մեծ զայրոյթ կը յայտնեն որ կարծես թէ կոտոր կոտոր պիտի բնեն :

Այնպիսի մարդ մը՝ որ տաաներկու տարիէ ի վեր հաղարտմէկ ներութիւններ կրնէ իւր ազգայնաց օգնութեան հասնելու համար : Ըրած ծառայութիւնները, կրած նեղութիւնները երեւակայական բաներ չեն, ամեն մարդ գիտէ : Ամեն մարդ գիտէ թէ նա ինչպէս բանը գործը ձգելով փութաց Նեկովիդիայ գիծակին սովատանջ գիւղացւոց հաց հասցընել : Փրկել հիւանդանոցին սղաղի վիճակը տեսնելով՝ ամեն ճիշդ թափեց մինչև Եւրոպա ճանապարհորդեց և նոյն հաստատութիւնը գրեթէ վերանորոգեց, մէջք փառաւոր դպրոց մ'ալ կառուց, որուն համար բնութեան անարժան փոխարինութիւնն ալ գիտենք : Աղգին մէջ առաջինն եղաւ ամենօրեայ թերթ մը հաստատելու, որ իր անունը՝ ուզես չուզես՝ կանխահայրնէ : Այսօր երկու մեծ վարժարան հաստատուելու կը կառավարեն, ամեն նեղութեան ու յարձակման դէմ դնելով : Թող ուրիշ հաղարտութիւն մեծ ու արդիւնք գործերը, որոնք հաշուելն երկար կըլլայ :

Մեր՝ կը հարցնեն թէ, քանի՛ Հայ կամ լուսն, քանի՛ մարդ կը գտնուի այսքան արդիւնք յաւաքելու :

Ես՝ չիտալիք, մեծ ապերախտութիւն կը համարեմ այսպիսի օգտակար արդիւնաւոր և աշխատասէր անձ մը սղաղան գոհելի կերպով փոխարանելու վրան յարձակիլ :

Ասիկա՝ մարդու արժէք չճանաչել է : Իսկ եթէ փանոսեան էֆէնտի գեշ մարդ էր, առանկրու ասորիէ ի վեր ուր էր խելքերնիս : Չէ՛նէ՛՝ առաջ աղէկ էր և հիմա՝ գէշացաւ :

Բայց չկրնար ըլլալ : Ի ընէ բարի մարդ մը չկրնար գէշեալ, ինչպէս որ ի ընէ չէ՛ մը չկրնար վերջէն բարի ըլլալ : Բարին միշտ բարի է, թէ՛ պիտի կրնայ սխալիլ, և չարը միշտ չար է, չկրնար ուղղուիլ՝ առանց Աստուածային շնորհաց ինչպէս Պօղոս սրբազան առաքնաւոր :

Արդ, և թէ փանոսեան էֆէնտի, ի ընէ չար մարդ մըն էր ու մեր թնթերցողութեամբ չենք հասկնալ որ զայդ և առաքինի անձ մը համարելով՝ անոր մեծամեծ արդիւնքը մոյսերի և մինչև իսկ հարկ բաւոր աղջկաներնու անոր տունը լեցուցեր էինք, քիչ է՝ մեր է յանցանքը, որ լուսն չճանչցած մարդերնու մինչև իսկ յանձնեցինք դատարարութեան ամենախիղիւ ճիւղը :

Իսկ եթէ ընդ հակառակն, նա բարի անձ մըն է, ինչպէս ես կը հաւատամ թէ էր և է, ուրեմն դարձեալ մեզի նախադէմք՝ անպատուութիւն է բարի անձ մը մատնել այդքան ստորին տեսակ յարձակմանց :

Մերազնեայց ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս կէտին վրայ :

Հայեր, սիրելի Հայեր, որ տկար և անշուք խօսքերու շատ անգամ ուղկընդիւր ըլլալու վնասներն ինչն ունեցեր էք, կ'աղաչեմ, ու՛ գրեք նախա խօսքիս, որուն վրայ շատ կը խորհիմ ես, ու սիրտս կը ծմի :

Ես ցուելով կը նշմարեմ որ, մեր ազգը որ քան զոր ցիտաւորութիւնը, և առ ամենէն լուսաւորեալ դարուն մէջ որ ուստ օրէ աստիճանաբար աւելի տըխուր պատկեր մը կը ներկայացնէ աշխարհի : Իրաւ է թէ, դատարարութիւն, կրթութիւն, լուսաւորութիւն և այլն գեղեցիկ բառերը մեր չըլծանց վրայէն անպակաս են : Բայց ատոնք խել մը անձանց բերնին նիւթ եղած բառեր են միայն, ամենին չտեսնուիլ ատոնց արդիւնքը : Որ ըստ օրէ պատկերիս կը պակսիկոր օտարաց տուլու, վասն զի ամեն օր մէկ մէկ խայտառակութեան պատկեր կը ներկայացնենք լուսաւորութեան ապագային վրայ :

Կը կարծենք թէ արեւելեան ազգաց մէջ ամենէն յառաջադէմն էինք մենք : Ուր է յառաջադիմութիւննիս : Մեզի բնականից բոլոր ազգաց մէջ ամենէն յետինն եղած ենք այսօր, և ամենայն մատամբ, դիտութեամբ, կըրթութեամբ, հարստութեամբ, ազգեցութեամբ և պատուով :

Պէտք էր որ մենք հիմայ խիստ ազնաւորաց ժողովուրդ մը ըլլայինք միայնապէս անենք՝ փանախոհ՝ հաւատարիմ՝ արդար՝ միայն ինչններէ խորշոյ՝ մարդասէր, վերապէս դարձարեալ այն ամեն կատարելութիւններով՝ որ վայել է փայտակար Աստուծոյ ստեղծեալ մարդուն ընդհանրապէս, և Հայկայ նման վեհ գիւցաղին մը սերընդեան մասնաւորապէս : Որ օտար ազգերը պատկառանք նայէին մեր վրայ, մեծարանք բերան անելին Հայոց անունը, և նախանձէին մեր վարուց և բարուց վրայ :

Բայց սիւստ, որ մենք զմեզ շատ կը նուատառնենք :

Ի վերջբանիս, սա ես մտնալու չենք բնաւ, թէ Պօլիս Տաճկաստանի լուսաւորութեան կեդրոնն է, աստի լոյս պիտի տարածի գաւառներուն : Ուստի որբազան պարտաւորութիւն մը ունինք մեր վարքովը, մեր գործերովն օրինակ ըլլալու դատաւայնաց ինչ բոլոր արդիւնք մեր գաւառաբնակ ազգակցիք երբ տեսան կամ լսեցին սա օրերուս մէջ երեցած խայտառակութիւննիւր :

Ս. Մարտեան

Տիւնի նիստեմիդոն տերճինի վատ իմաստիկի փորձաքննութիւնն ու պակասութիւնն տեճէ թե՛ իրիդ :

Իմ արդիւնք փորձ :

Չայն մը դոր մարդ կարտասանէ այն տեսն երբ նա կիրքերով զգացաւ : Խօսքը կամ դատողութիւն մը զոր կ'են այն մարդը որուն ուղեկց նախնաւ և ատելութեան ժառանգութիւնն է յաղախած : Որ թող բնաւ անհնչ մէջ ճշմարտութիւն և կանոն վերաբերուի զի ինչպէս կ'արեւելէ ճշմարտութիւն յուսալ այն խօսքի և դատարարութեան մէջ զորս յղացող մարդին հիւանդ են, մէկ աչքով միայն կը հայկին կը տեսնեն կամ տեսնել կուզեն այն

բաները միայն որ իրենց կրկնք, իրենց կայր համարմանը նպատակաւոր է և աչքունքն մէկդի կը դարձունեն չը տեսնելու համար զանոնք որք կ'ենան իրենց սխալը իրենց ճանչցելու :

Հասարակութիւնը սա վերջին օրերս լուսն հանեց փանոսեանի վրայ (եթէ հասարակութիւնն էր ասի ընողը) : Լուսն մը կամ աւելի չիտանք բոլոր զըրպարութիւն մը որ, կարծես կայծառ կիւրաքութեամբ, խիղիւս ամբողջ Պօղոս Հայրենիքը յուղեց :

Այդպիսի զրպարտութիւն մը ամեն տեղ և ամեն ազգէն բազմաթիւ անձանց վրայ կընայ պատահել, բայց ոչ մէկը ասոր չափ արագ, ասոր չափ բնագործակ և ասոր չափ այլանդակ խոջորութեամբ չէ կրցած տարածուիլ : Գիտէք ինչպէ՞ս, բնական է գիտնալ, վասն զի զրպարտողը մեծ անձ մ'էր, վասն զի նա նախանձէր մարդ մ'էր, վասն զի նա ազգին մէջ վայելի սխաւ, և ուր տեսնուած է մարդ մը որ միայն իւր անձնաւորութեամբ, ազգասիրութեամբ և գործունէութեամբ, հասարակ և ստորին վիճակէ մը այդչափ բարձր վիճակի մը բարձրանայ, այդ աստիճան համբաւ մը ստանայ և տալիս իրեն նախանձողներ չ'ունենայ, նախանձող գիւղերը, որոց պակաս չէ բնաւ ցած և անարժան մարմին մը հետեւելու :

Յիշատի ամեն անոնք որ նախանձու այդ կայր կիրքով թուեաւորուած չեն, ամեն անոնք որ յամառ կուսկցութեամբ մը զղանաւ չեն և անտարբերութեամբ կ'ուզեն դատել ինչ որ տեսնեն, թող քիչ մը տեսնեն քննեն սա երկու շարժանքներուն մէջ հրատարակուած մէկ քանի հրատարակութեան թերթերը, կրնան արդեօք անոնց մէջ գրեալներէ բան մը որ լուսն քննութեամբ մը կամ կանոնաւոր դատողութեամբ մը գրուած ըլլայ ինչ որ անոնց մէջ կ'կարդամք, ինչ որ անոնց մէջ կը տեսնեմք, ամենքս ալ կը յայտնենք մեզի մեր թերթերուն խմբագիրները անձնական թշնամութիւն մ'ունին երբ յառաջուց փառնաւանի գէմ, թէ նախանձ կատողնոյցեր է եղեր այդ մարդոց հոգին և թէ առթի մը կ'ապասեն եղեր որ յանիրաւի այն մարդուն վրայ յարձակին : Գուցէ բնթերցողները հիմայ մեղադրեն զիս իմ այս քաճանքուն համար իբրեւ թէ ես ալ կ'առաջարկեմ որ ոչին կրած ըլլամ, բայց ես միայն անոնց կը խօսիմ որք խորհիլ, մտածել և դատել գիտեն և խաչուն մտածող, և դատող մէկը կրնայ բաժնեկէս զիս ճանչնալ և գիտնալ թէ անկողմնակալ մէկն եմ փանոսեանի Աղապեան վարժարանի համար խիստ կ'ապահովել զայց մը կ'ըլլէ, այդ լուսն մէկ օրուս մէջ զուցէ տեսել արագ և բոլոր Պօղոս մէջ կը տարածուի և ամենախիղիւս թան մը իբրեւ ամենաճշմարիտ իրողութիւն ամենուն տեսնելն կը հնչէ, արդ ինչ աւելի բնական է իրաւայնէ լրտն դայր հետեցիներ թէ այդ լուսն յատկապէս իւր ուղաչանեալներն ունեցած չ'ըլլայ և անոր տարածմանը համար նպատակաւոր խումբ մը իւր վառապաշտօնը կատարած չ'ըլլայ : Բայց անկէ աւելին կայ : Հագիւ փանոսեանի վրայ այդ զրպարտական լուր տարածուիլ կ'սկսի, և ահա իսկից Աղապեան վարժարանին ծագութեամբ կը տեսնուի Մեղուի մէջ որ կարծես թէ կանխաւ զրպարտուելու և պահուելու էր և նոյն լուսն տարածմանը կ'ապաստէր հրատարակելու համար տակէն զատ յաջորդ և յաջորդ Մեղուներու մէջ, նոյնպէս Երկրատեսերու

մէջ ծայրէ ի ծայր փանոսեանի և Աղապեան վարժարանի գէմ վատ գըրուածներէ զատ ուրիշ բան չ'կարդացուիր :

Երբէք տեսնուած էր արդեօք Մեղուի և Երկրատեսի մէջ որ մի և նոյն նպատակին վրայ այնչափ շատ և ընդարձակ գրուած մը ըլլար և հետզհետէ ելած ամեն մէկ թերթերուն մէջ զփանոսեան և Աղապեան միայն իրենց ինքն ունեցած ըլլային : արդար յաճախել, ընդարձակ և կարգէ դուրս անարգաբար գրուածները կարծես թէ թերցողին բռնի համոզել կուտային թէ այդ երկու թերթերուն խմբագիրները այն մարդուն կանխաւ թըշնամութիւն մը ունեցած են և իրենց բոլոր գործերէ կ'ազնեւ եղեր զանի հարուածել : Այս երկու թերթերուն հատուկէլ խմբագիրները բաւական խելք ալ չ'ունին եղեր որ գոնէ իրենց նախանձը և թշնամութիւնը այս տատիճան յայտնի կերպով երևան չը հանեն և զուր տեղը հասարակութեան կտակածը չը յարուցանեն իրենց վրայ : Աստեղ գոնէ Օրադրի չափ ալ չ'եղան որ եղած զրպարտութիւնը իբրեւ ճշմարտութիւն դուրսեւ համար, գոնէ քիչ մը տեսն լուսն և իբրեւ թէ խմբիւր ընկել, կուտէ և հատկապէս յետոյ, վերապէս փաստաւորանել սկսեց : Ինչպիսի ալ անհասկանալի յառաջաքանէ մը սկսեց էր :

Բայց հիմայ սլիտի բռն ընթերցողք թէ ատոնց զայրոյթը փանոսեանէն էր որ զըրեւնի իւր առաջին ուղղած նախաւորութեան գրուածներով, լուսն բայց ս'ըլլէ որ առաջին անգամ տեղի տուաւ նոյն նախաւորից գրուածներուն, ո'վ էր, որ պատճառ եղաւ անոր օրհնած բերանը բանալուն : Անոր ինչ աստիճան զայրոյթ զգալը իմանալու համար, մենք որ կուզենք զանի դատել և անոր գրուածներուն վրայ քննադատութիւններ ընել, վայրկեան մը ամեն մէկերնիս մէջ մէկ փանոսեան ըլլանք, իրեն այնչափ պախարակած և անարգած Գեղեցիկը յայտն տեսնելու, լուսն սոսն և երբեմն ալ աւելի աշակերտուհեաց ամեն օր հաց, զըրբ թուղթ են, հասցնենք, դատաւորներու, տունի և այլն ամառ կանոնը տանք, վերջապէս ամեն ամիս 70-80 սկի ծախսելով երեք տարի շտուանակ վարժարան մը կ'առաւարտած ըլլանք, և հիմայ ալ ելին մեզի այդչափ վատ արդար ցած և անխել զրպարտութիւն մը ընեն, ինչ ըլլանք մենք ան տեսնել, ինչ ըլլանք դուր ան տեսնել, Հայեր, կը հարցնեմ ձեզ ինչքազիւնիդ անգամ մը անոր տեղը գրեք և այնուհետև ուղեկցեք դատել անոր գրածները, ուստի ամս թէ մի թէ որ մինչեւ նախանձու և ատելութեան ոգիները անոր թշնամութեան կատողեցուցին, բարիութեան և ցամառն ոգին ալ զանի կատողեցուց : այս, այնպիսի դատաւարութեան մը այնպիսի ալ հաստատութեան մը այնպիսի ալ հաստատութեան մը հարկաւոր էր : Առեւժը քանի որ չը դարձել իրեն վնասն է, բայց թէ որ դպրոց, ալ մի բարկանար եթէ նա մանչ և զըրեւ պատուէ :

Խօսքս կը վերջացնեմ, . . . իրմատեմ, աղաչելով զձեզ, որ այն գրուածիս տեղի մը չնորհէք ձեր անկողմնակալ լրագրոյն մէջ :

Մ.
ՓՈՂ.

ՄԱՆՁՈՒՄ ԳԱՅԵԼԻԹԻ
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ